ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ՀԱՆՐԱՅԻՆ ՀԵՌՈՒՍՏԱՌԱԴԻՈԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

27 Հունիս, 2019 թվականի № 29-Լ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՅԻՆ ՌԱԴԻՈԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ՇԱՀՈՒԹԱԲԱԺՆԻ ՍԱՀՄԱՆՎԱԾ ՉԱՓԸ ԵՎ ՍՏԱՑՎԱԾ ԶՈՒՏ ՇԱՀՈՒՅԹԻ ԲԱՇԽՄԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի մարտի 3-ի N 202-Ն Հայաստանի Հանրապետության կառավարության որոշումը, «Հայաստանի հանրային ռադիոընկերություն» փակ բաժնետիրական ընկերության (այսուհետ՝ Ընկերություն) կանոնադրությունը, Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարի 2019 թվականի թվականի հունիսի 20-ի N 01/3-3/10427-2019 գրությունը և ղեկավարվելով «Հեռուստատեսության և ռադիոյի մասին», «Բաժնետիրական ընկերությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների պահանջներով՝ Հանրային հեռուստառադիոընկերության խորհուրդը ո ր ո շ ու մ է.

1. Հաստատել Ընկերության կանոնադրական կապիտալում պետության սեփականությունը հանդիսացող բաժնեմասի դիմաց 2018 թվականի գործունեության արդյունքներով Հայաստանի Հանրապետության պետական բյուջե վճարման ենթակա տարեկան շահութաբաժնի չափը՝ 33,404.0 հազ. ՀՀ դրամ:

2. Հաստատել Ընկերության 2018 թվականի գործունեության արդյունքներով ստացված 56,650.0 հազ. ՀՀ դրամ զուտ շահույթի բաշխման հետևյալ ուղղությունները՝

   ա) 33,404.0 հազ. ՀՀ դրամը չուղղել Ընկերության կանոնադրական կապիտալում պետության սեփականությունը հանդիսացող բաժնեմասի դիմաց Հայաստանի Հանրապետության պետական բյուջե վճարման ենթակա շահութաբաժնի վճարմանը, այլ դիմել Հայաստանի Հանրապետության կառավարությանը շահութաբաժնի վճարումից նշված գումարի չափով ազատելու և ազատված գումարն ուղղելու Ընկերության վարկային պարտավորությունների մարմանը,

   բ) 23,246.0 հազ. ՀՀ դրամն ուղղել Ընկերության պահուստային հիմնադրամի համալրմանը՝ «Բաժնետիրական ընկերությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 43-րդ հոդվածի 1-ին մասի պահանջներին համապատասխան:

3. Սույն որոշման պահանջների կատարումը հանձնարարել Ընկերության գործադիր տնօրենին:

ՀԱՆՐԱՅԻՆ ՀԵՌՈՒՍՏԱՌԱԴԻՈԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ
ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ Ա. ՇԻՐԻՆՅԱՆ

27 Հունիս, 2019 թվականի
ք. Երևան